

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՖԻՐՄՈՒՄԻ

ԱՐՇԻԵԼԵԱՆ ՎԻՊԱՇԽԱՐԶ, պատկերադարձ. տետր Ա. ՌՈՒՍՏԵՄ և ԶՈՂ-
ՐԱՐ, գերմաներէնից թարգմանեց փԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆՅԻ ԹԻՖԼԻՍ,
տպարան Մարտիրոսեանցի. 1889 թ., քառածալ, 46 երես, տառ
№ 12, գինն է 20 կոպէկ:

Շնորհիւ պ. Փիլիպպոս Վարդա-
նեանցի, մեզանում ևս սկիզբ է առ-
նում գրականութիւնը. Ֆիրգաուսի,
սովորապէս կոչւած Ֆիրդուսի. նա,
որ ամենամեծ բանաստեղծն է Պարս-
կաստանի և որը ապրում էր 940—
1020 թ., ուրեմն մեզնից շուրջ 900
տարի առաջ. Յալանի է, որ սորա
գործն է հռչակաւոր Շահ-նամէ
կամ Թարգաւորի գիրք, որի բանաս-
տեղծական արժանաւորութիւնը նոր
չէ գնահատուել ընդհանուր գրակա-
նութիւնից. իբրև իսկական բանաս-
տեղծական գանձ, նրան աշխատել
են թարգմանել եւրոպական գլխա-
ւոր լեզուներով, և այդ թարգմանու-
թիւններին ձեռնամուկ եղած ան-
ձերը, ի հարկէ, պարսիկները չեն,
ալ եւրոպացիք իրանք և ալն էլ նո-
քա, որոնց բանաստեղծական քան-
քարը ճանաչւած է նաև իրանց հալ-
րենի գրականութեան մէջ. Այդ մա-

սին դեռ չեսող. բայց պէտք է իմա-
նալ, որ Շահ-նամէի նոյն իսկ բնա-
գիրը, Փարսերէն լեզուով, մատչելի է
դարձրած ընդհանրութեանը՝ նմանա-
պէս եւրոպացիների ջանքերով, քա-
նի որ Շահ-նամէից ցալժմ կան մի-
ալն երեք հրատարակութիւն և, որ-
քան ինձ այդ չալտնի է, նոցանից
գոնէ երկուքը եւրոպացիների հրա-
տարակութիւններ են. Այդ երեքից
առաջինը հրատարակւած է Թահերա-
նում, երկրորդը՝ խնամքով Տուրնէր
Մականի՝ տպւեց Կալկաթալում, իսկ
երրորդն է Պարիզի հրատարակութիւ-
նը Իւլիուս Մօհլի. Ով բնագրից ու-
զում է թարգմանել, պէտք է դիմէ դո-
ցանից մէկին կամ միւսին, ի հարկէ,
գլխաւորապէս երկրորդին և երրոր-
դին, չը նաչած որ դոքա պակասու-
թիւններից գերծ չեն, իսկ է, Տուր-
նէր Մականը հիմուեց մասամբ լաւ
և հին ձեռագիրների վերալ, բայց

ընդունեց նաև բաւականի քանակութեամբ, անկասկած, անհարազատ ուսանաւորներ, Շատ աւելի մեծ լարածակումների ենթարկւեց Մօհլի հրատարակութիւնը, որը ղերծ չէ չափի և լեզուական սխալներին, Կալ նաև մի չորրորդ հրատարակութիւն, որը առձեռն գործածութեան համար է նշանակւած. նրան սկսեց Վոլլերս (Vollers), Գլսեն'ում (Գերմանիա), որի մահից լիտ ալն շարունակեց Սամուէլ Լանդաուէր, Սա տպւում է Լէզզէն'ում (Բելգիա), Բռիլլի տպարանում և ցալժմ հասած է երրորդ հատորի վերջը, Բալց արդէն հինգ տարի է, որ ալդ հրատարակութիւնից նոր անտր չի լոյս տեսել և, որպէս երևում է, մնացած երկու վերջին հատորը իրանց դեռ ևս երկար պէտք է սպասեցնել տան.

Ալթման գրականութիւնը դեռ ևս, ի հարկէ, հեռու է քննադատական մշակութիւնից Ֆիրդաուսի Շահ-նամէ'ի. Նա դժարացած է գըլխատրապէս նրանով, որ չափազանց շատ են նորա ձեռագրերը, որոնք Ասիայի և Եւրոպայի գրադարաններում կան և որոնք բոլորը իրարից շատ թէ քիչ տարբերում են. Աւելացնենք, որ մի Ֆիրդաուսի-բառաբան կը լինէր նախապատրաստական աշխատանք, որը ղեռ ևս չը կալ. Նորա նպատակը կը լինէր բանաստեղծի բառերի իմաստը լաւ որոշել. ձիշդ է, սակալն, որ Մօհլը, իւր հրատարակութեան մէջ, բնագրի հետ կից տպած է նաև մի լիակատար ֆրանսերէն թարգմանութիւն, և ալս վերջինս առանձին լոյս ընծայեց Մօհլի ալրին ևօթը հատորիկներով, 1876—78 թականներին.

Ալդ ֆրանսերէն լիակատար թարգմանութիւնից դատ և դրանից աւելի հեռու շրջաններում ծանօթ է գերմանական ալթման ամենանշանաւոր բանաստեղծներից մէկի՝ Կոմս Շակի'ի փոխադրութիւնը գերմաներէն լեզուով. Բալց նորա փոխադրութիւնը ամբողջ Շահ-նամէ'ն չի պարունակում, այլ միալն սորա ամենաբանաստեղծական կտորները հէքիաթական-պատմական ժամանակներից. ճիշդ է, որ Շակի'ի „Heldensagen von Firdusi“ ալնու ամենալին ամբողջի մի բաւականի նշանաւոր մասն է կազմում.

Ալդ թարգմանութիւնների վերալ անցեալ 1889 թականին աւելացաւ մի երրորդը և ալն էլ լիակատարը իտալերէն լեզուով, և ալդ թարգմանիչն է՝ Խալաօ Պիցցի, պրօֆեսօր Տուրինում. (Firdusi, il Libro dei Re, poema epico recato dal Persiano in versi Italiani da Italo Pizzi. Torino, Vincenzo Bona. 8 հատորով, փոքր 8-ածալ, 1886—89). Ալդ հատորների ծաւալը և արտաքինը բոլորովն նման են Մօհլի հրատարակութեան, որից նա տարբերում է միալն նրանով, որ Մօհլի ֆրանսերէն թարգմանութիւնը արձակ է, իսկ Պիցցին թարգմանել է ոտանաւորով, որով սա աւելի մօտեցում է բնագրի ոգուն. Արդարև, մեծ համբերութիւն պէտք է ունենալ Շահ-նամէ'ն ամբողջապէս ոտանաւորով թարգմանելու համար. Խնագրի մէջ ալդ գիրքը բաղկացած է 50.000-ից աւելի կրկնակի ոտանաւորներից և շատ բնական է, որ ալդ երկարութեան մէջ ամենազեղեցիկ, ալ՝

անգամ ամենամեծափառ կտորների կողքին կան բաւականի երկարաբանութիւններ և կրկնութիւններ, որոնք ընթերցողին, ուր մնաց թէ թարգմանչին և ալն էլ չափով թարգմանողին, պէտք է դադրեցնեն:

Ես այս նախածանօթութիւնը հարկաւոր համարեցի նախ, որ մեր գրականութեան մէջ եթէ մի բան չափտնի է Ֆիրդաուսի մասին, այդ լոկ նորա անունն է: Այժմ մեր ընթերցողները կարող են համոզուիլ, որ նորա Շահ-Նամէն ուշադրութեան է առնւած եւրոպական գրականութիւնից ոչ թէ միայն լոկ հետաքրքրութիւնից պարսկական բանաստեղծութեան համար, այլ նորա դրական արժանաւորութիւնների համար. Շահ-Նամէն պատկանում է ալն սքանչելի ստեղծագործութիւններին, որոնք նշանակւած են անմահ մնալու համար: Բայց, ի հարկէ, որպէս վերը ասեց, նա շատ է երկար և ունի կրկնութիւններ ու ձգձգած տեղեր, որոնք կարող են դէն զցւել հմուտ թարգմանչից, թողնելով միայն ալն մասերը, որոնք բանաստեղծութեան մի մի մարգարիտներ են: Այդպէս է վարւել կոմս Շակլը, որը փոխադրութիւն է տւել և ոչ բառացի թարգմանութիւն: Եւ առաջով հալ գրական ութեան համար հարկաւոր է աւելի առաջինը, քան երկրորդը, որովհետև մենք զարգացման դեռ ևս ալն աստիճանի վերաջնք, որ թարգմանները զուտ ուսումնասիրութեան համար, ալ մեր թարգմանչների ջանքը պէտք է լինի մեր գրականութիւնը հարստաղնել տալով թարգմանութիւններ, որոնք մի և

ն ուն ժամանակ մեզ ծանօթացնեն օտար հեղինակների ոճի և տաղանդի զօրութեան աստիճանի հետ: Բայց նոցա առաջին հոգսը պէտք է լինի դեռ ևս հեշտ ընթերցանելի դրածօքներ տալ հասարակութեան: Այդ տեսակէտից մի պակասութիւն չէ, եթէ Շահ-Նամէնի նման երկար էպօսը մեղ տրուում է ոչ լուր լիակատարութեամբ, այլ նորանից տրուում են մեզ միայն հատընտիր կտորներ և եթէ այդ կտորներն էլ մեզ տրուում են ոչ անպատճառ չափով, ոտանաւորներով, որպէս բնագրումն է, այլ արձակ, պրօզաով:

Պ. Փիլիպպոս Վարդանեանցի «Խոստէմ և Զոհրաբ» Շահ-Նամէնի էպիզոդներից մէկն է: Եւ կարող ենք աւելացնել, ամենասքանչելին և ամենաժողովրդականը: Հալ թարգմանչը մեղ ալդ էպիզոդը տալիս է արձակ դրած թարգմանելով գերմաներէնից:

Պ. Վարդանեանցը աշխատել է իւր թարգմանութեան մէջ պահպանել պատմութեան առարկային չարմար վսեմ ոճը: Եւ իրօք, ալդ ոճը սազական է. բայց եթէ ի նկատի առնենք սովորական լեզուում և նոյն իսկ աշխարհիկ գրականութեան մէջ սակաւ և կամ ոչ դործածական բառերի ալն հազին քանակութիւնը, որ մենք գտնում ենք պ. Վարդանեանցի գրքի մէջ, — մենք փորձած ենք տեսնում մեզ հարցնել, թէ ում համար է հրատարակւած նա՞ հալկաբաների թէ երեխաների համար: Ինչ էլ ասէր չօղոտ կլասիկ բառերի ու ոճերի, բայց ալներն է, որ մեր ներկա ներուողը, բայց մանաւանդ չափտ-

նի հասակի տղաները և աղջիկները դեռ ևս սովոր չեն ապսխսի բառերին՝ սօս, երիվար, կապարձ, ծառանել, շամբուտ, փոկ, առասան, անվկանդ, բարևմուցն, համբակ, չովտակ, զամբիկ, մտրուկ, դիմագրաւ, բարապան, անջրպետ, սադաւարտ, չովազ, անժուժ, գուպարել, վերտ, ղինադուլ, շահապ, դիահանք, կարեվէր և այլն։ Վոնէ մի հատ երես բառարան պէտք էր կցել գրքուկի վերջին կամ սկզբին։ Բայց աւելի էլ լաւ կը լինէր, պահպանելով անհրաժեշտը, նոցանից շատերը ուղղակի փոխարինել աւելի աշխարհիկ խօսքերով։

Ինչ թւում է, թէ պ. Վարդանեանցի թարգմանութիւնը, ուղում եմ ասել, բանեցրած ոճը համապատասխան է առարկայի վսեմութեանը և գոնէ մօտաւորապէս զգացնել է տալիս աչն ճաշակը, որը կը ստանար պարսկագէտ ընթերցողը, եթէ ընագրին գիմէր։ Ի հարկէ ո՛ր է, երբ մի գրամատիկական գործողութիւն պատմած է ոտանաւորով, որի հեղինակը սքանչելի վարպետութեամբ

գիտէ խաղացնել ցանգն ու չափը և ո՛ր, երբ նովնը պատմած է պրօզայով, ուր գրամական ուժգնութիւնը գրեթէ կորչում է արձակ պատմութեան ձևերի մէջ։ Ոչ աւելի, քան մի հատ օրինակ։ Ռուստէմ և իւր որդի Զոհրաբը, առանց իրար ճանաչելու, իրար ուժը չափել են մի դօտեմարտում։ Առաջին անգամ իւր կեանքում չաղթեց Իրանի ծեր հերոսը, իւր պատանի հակառակորդից նա տափն է տրուում և միայն խորամանկութեամբ կարողանում է իւր կեանքն աղատել։ Երկու կռուողները համաձայնութիւն են կապացնում երկրորդ անգամ իրար գիպչելու և բաժանում են։ Զոհրաբը անհոգ մտքով անձնատուր է լինում որսորդութեան, մինչդեռ Ռուստէմը առանձնանում է, սիրտը լիքը ցաւով և ահի գուշակութիւններով։ Եւ ահա թէ ինչպէս է պատմում Ֆիրդուսին, որի տեղն ենք գնում իտալական ձիշղ և հարազատ թարգմանութիւնը, ինչպէս է նովնը փոխադրում կոմս Շալի՛ը և ինչպէս է թարգմանած հալերէնում պրօզայով։

Ֆիրդուսի՛ Պիցցի՛ի թարգմանութեամբ (երես 282—283)։

„Udii che un giorno,
Di sua carriere nel principio, tanta
Ebbe Rustem da Dio possanza e
forza,
Che ov'ei salia co'piè sovra una
rupe
Ambo que' piedi suoi dentro la
rupe
S'affondavano entrando. Ei si dolea
Di tanta forza sempre e sempre,
e il suo

Նովն տեղը՝ Շակի՛ի փոխադրութեամբ. (երես 180—181)։

„Es hatte Rustem, sagt man, in
Beginne
Durch Gottes Huld so grosse Stärke
inne,
Dass, wenn zü fels'gem Grund den
Schrit er lenkte,
Sein Fuss dort einbrach, weil der
Fers sich senkte.
Als lästig war ihm diese Kraft
erschienen,
Die ihm beschwerlich fiel statt
ihm zü dienen;

Cor fu ben lungi dal cercarla mai
 Si che mesto ei pregò dinazi a Dio
 E con angoscia dimandò che parte
 Da tal vigor tolta gli fosse, libero
 Perch'ei potesse camminar sua
 strada.

Ratto scemò, sì come chiesto avea
 Da Dio santo, il vigor del valoroso
 Pari a un gran monte. Ed or che
 grave impresa

Eragli innanzi, or che gli venne al
 core

Per timor di Sohràb alta ferita,
 A dio fe' un grego sospirando e disse:
 Al tuo servo, o Signor, noll'ardua

impresa
 Tu sii custode. Or io quella ti
 chieggo

Virtù sovrana che mi desti un
 giorno,

Almo, santo Signor, di mia car-
 riera

Al cominciar. — Sì come chiesto
 avea,

Resegli allor la sua virtù sovrana,
 Ciò che scemava un dì gli accreb-
 be Iddio

Nella persona. Edegli allor dal fonte
 Toglieasi ratto e si redia dell'armi
 Al fatal campo. Ma d'assai pensieri
 Ingombro era quel cor, pallido il
 volto“.

Ահա, այս վերին աստիճանի բա-
 նաստեղծական կտորն է, որ պ. Փի-
 լիպպոս Վարդանեանցի գերմաներէն
 օրինակը արտալատում է այսպէս.

«Մինչդեռ Ջոհրաբը կազդուրիչ
 քնով հանգիստ էր տալիս իւր մարմ-
 նին, Ռուստէմը զինադուլից օդուտ
 քաղեց՝ գնալու մօտակալ հովիտը,

Er hatte früher drum sich in Gebet
 Zü Gott gewendet und ihn aufge-
 fleht

Dass er die Ueberkraft ihm min-
 derte;

Weil sie auf jedem Gang ihn hin-
 derte;

So hatte Gott auf seinen Wunsch
 geringer

Die Stärke denn gemacht dem
 Weltbezwinger.

Nun aber, da der Sieg ihm zwei-
 felhaft

Bedünkte wegen Sohrabs grosser
 Kraft,

Rief er: O du, von dem da Gute
 kommt,

In diesem Drangsal gib mir, was
 mir frommt,

Gib mir zurück die einst verlie-
 hene Gabe,

Die Kraft, idie ich vordemb essen
 habe!

Und sieh, da gabihm Gott die Kraft
 der Glieder,

Die er genommen, auf sein Flehen
 wieder.

Aufs Schlachtfeld kehrte Rustem
 dann voll Bängniss;

Er zagte vor dem kommenden Ver-
 hängniss“.

ուր երբեմն մի տարօրինակ հանդի-
 պումն էր ունեցել, որ և այսօր նո-
 րից փչեց: Այն ժամանակ—թերևս

մի քսան տարի առաջ—Ռուստէմն
 այնքան զօրեղ էր, որ նեղութիւն

էր զգում իւր ուժից, և այն քարուտ
 ձորը գնալիս այնպէս ծանր ուղք

գնում, որ ամեն մի քաղիւն մինչև

պճեղները նրանում էր պլնդ գետնի մէջ, Այն ժամանակ էր, որ լանկարծ մի զլարթ ծիծաղ լսեց նա, և աչքերը վերցնելով մի ոգի նշմարեց, որ նոյն ձորի շահապն էր: «Խուտեմ, ասաց շահապը, ալդ ուլը, որ տեւ է քեզ մալր բնութիւնը, անչափ շատ է մէկի համար: Դա քեզ բնաւ օգտակար չէ, ալլ ճնշում է քեզ: Գորա մի մասը դու ինձ տո՛ւր. ևս կը պահեմ, և երբ որ քեզ պէտք լինի, կը գաս, նորից լեւս կ'առնես»:

Փահլխանը տաւ շահապին իւր զօրութեան աւելորդ մասը, որ նա պահէ: Այժմ գնում էր լեւս ուղելու ալդ պահ տաժ բարիքը, որովհետեւ վախճում էր, իւր ամբողջ զօրութիւնը ձեռք չը բերած, կուլի դուրս գալ Զոհրաբի դէմ:

Շահապը նորա ձախը լսեց թէ չէ՝ լառաջ եկաւ և ասաց. «Լաւ կ'անես, որ զօրութեանդ ալդ մասն ինձ մօտ թողնես՝ ալս ժաւուի ծերպի մէջ: Այստեղ նա աւելի ապահով կը մնալ, քան ձեռքումդ: Այս ծեր հալօք ինչո՞ւ ես ուղում բռնաւորել քեզ դրանով»:

«Յետ տո՛ւր, հրամայեց փահլխանը. այսօր ես կարօտ եմ բոլոր ուժիս,

որ ստացել եմ բնութիւնից: Տո՛ւր, ասում եմ, և մի ստիպիր որ սպասեմ»:

«Թող ալդպէս լինի, պատասխանեց շահապը. գուցէ ստանաս պահ տաժ ուժդ, բալց իմացիր—դա քեզ բաղդ չի բերի: Ալդ առողջ զօրութիւնը միայն փորձանք կը բերէ քեզ, որովհետեւ չէ լարմարում հասակիդ. և միայն երկտասարդ կտրճին է վալելուչ...»

Որպէս տեսնում է ընթերցողը, պ. Վարդանեանցի գերմանական օրինակը, որի անունը հալ թարգմանիչը զուր կերպով աւելորդ է համարել տալ, շատ և շատ տարբերում է Ֆիրդուսից, առանց որ դրանով ևս կամենալի լանդիմանութիւն անել ում և իցէ. դա մի աղատ փոխադրութիւն է, որպէս ալդ նաև նկատւած է գրքովի սկզբում: Որպէս ալդպիսին, նա լաջողւած է և մի լաւ լաւեւացում է հակակաճ թարգմանական գրադարանին, եթէ միայն, ի հարկէ, ալն Ա. տառը, որ գրքի ճակատին է դրւած, իրօք սկիզբն է նշանակում մի շարք հրատարակութիւնների Արեւելեան վիսալխարհից և ոչ միայն ձեւի համար է դրւած:

Ա. Ա.

ԱԳԱՊԵԱՆ ԱՐԵԱԿ.—«ՄՈՒՍԻՆԻ ԳԱՆԳԱՏԸ». պատկեր գիւղական կեանքից. (արտատպած «Նոր-Դար» լրագրից). 32 երես, փոքր ութաճալ, № 10 տառ. Թիֆ., 1890 թ., տպ. Յ. Մարտիր.: Գինն է 7 կոպ.:

Մի շատ սրտաշարժ գրամա է ալս պատահում է մեր հալ գիւղերում, փոքրիկ պատմութիւնը, մի դրամա, որ գուցէ ամեն տեղ, ամեն անգամ պատահում է մեր հալ գիւղերում, թէն մենք նորա մասին ոչ մի տեղեկութիւն չ'ունինք: Հեղինակը իւր